

Ա. Տ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՍ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 60-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունը հասարակական նոր հարաբերություններ սահմանեց մեր Երկրում և ժողովրդական տնտեսության նոր պահանջներին համապատասխան կյանքի կոչեց նոր ուժեր, նոր գաղափարներ ու հնարավորություններ, որոնք Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ապահովեցին Երկրի վիթխարի առաջընթացը և ընդամենը վեց տասնամյակի ընթացքում դարձրեցին այն ժամանակակից աշխարհի առավել զորեղ ու զարգացած պետություններից մեկը: Բավական է ասել, որ այժմ Սովետական Միությունը, որի տարածքում բնակվում է մեր մոլորակի ազգաբնակչության ընդամենը 1/16 մասը, արտադրում է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 1/5 մասը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը ապահովեց նաև գիտության զարգացման վիթխարի առաջընթացը: Բուռն վերելք ունեցավ երկրաբանական գիտությունը, որը սերտորեն կապված էր երկրաբանական-հետախուզական արտադրության և լեռնային արդյունաբերության հետ, և կոչված էր ապահովելու ժողովրդական տնտեսությունը հանքային հումքով ու ջրային ռեսուրսներով:

Սովետական պետության հիմնադրման առաջին օրերից սկսած և առանձնապես ԳՈԷԼՐՈ-ի հռչակավոր պլանում արդեն Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ նախանշված էին այն հիմնական և առաջնահերթ խնդիրները, որոնց լուծումը պետք է ապահովեր արդյունաբերության կարևորագույն ճյուղերը լեռնային հումքով: ՍՄԿԿ և Սովետական կառավարության տնտեսական ստրատեգիայի մեջ լեռնահումքային բազայի ընդարձակման ու հարստացման հարցը միշտ դրսևանում էր առաջավոր գծի վրա:

Նրա լուծման համար ստեղծվել են մասնագիտական կադրերի պատրաստման անհրաժեշտ օջախներ, լեռնահետախուզական տեխնիկայի արդյունաբերություն, տրանսպորտային հնարավորություններ, գիտահետազոտական և կոնստրուկտորական կազմակերպություններ, նյութատեխնիկական մատակարարման կենտրոններ, մշակվել են լեռնահետախուզական աշխատանքների բազմազան արդյունավետ եղանակներ, հումքի որակավորման ու պաշարների հաշվման համար անհրաժեշտ կոնդիցիաներ ու ստանդարտներ:

Մեր Հայրենիքը այժմ աշխարհում միակ երկիրն է, որն ապահովվում է սեփական լեռնային հումքի բոլոր տեսակներով: Քարածխի, նավթի, գազի, տորֆի, երկաթի, մանգանի, քրոմի, նիկելի, ապատիտի, ծծմբի, սնդիկի, կալիումական, նատրիումական և մագնեզիումական աղերի, բնական շինանյութերի և մի շարք այլ հանքանյութերի պաշարներով նա գրավում է աշխարհում առաջին տեղը, իսկ անագի, մոլիբդենի, վոլֆրամի, ռսկու, պղնձի, կոբալտի, ասբեստի և մի շարք այլ կարևորագույն հանածոների պաշարներով առաջին տեղերից մեկը: Այս առումով նշանակալից է այն փաստը, որ Սովետական Միությունը աշխարհի բարձր զարգացած

խոշոր երկրներից միակն է, որ զերծ մնաց վերջին տարիներին բռնկված էներգետիկական ճգնաժամի խաթարիչ ազդեցությունից:

ՄԼԿԿ 25-րդ համալումարում ընկ. Լ. Ի. Բրեժնևի հաշվետու զեկուցման մեջ երկրի արդյունաբերության զարգացման հեռանկարները հանգամանորեն բնութագրող տվյալներն ու գնահատականները և համազումարի որոշումը «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թթ. հիմնական ուղղությունների» մասին նոր վկայություն են այն խոշոր միջոցառումների, որոնք պետք է առաջիկայում կենսագործվեն երկրում տարվող լեռնահետախուզական աշխատանքները, ինչպես նաև գիտահետազոտական, կոնստրուկտորական, տեխնոլոգիական և այլ մշակումները հաջողությամբ ծավալելու նպատակով:

Ստորև մենք կանգ կառնենք Սովետական Հայաստանի երկրաբանների այն հիմնական նվաճումների վրա, որոնք ձեռք են բերվել Սովետական իշխանության տարիներին:

Երկրաբանական կառուցվածքով և ներծին պրոցեսների տրսևորման առանձնահատկություններով Հայկական լեռնաշխարհի տիրույթը բացառիկ նպաստավոր է եղել առաջացնելու մի շարք հանքատեսակների խոշոր արդյունաբերական կուտակումներ: Մեր լեռնաշխարհի վերջին 600 միլիոն տարվա պատմություն ունեցող ֆորմացիաներում ներկայումս հայտնի են սև, գունավոր, ազնիվ և հազվագյուտ մետաղների, բնածին աղերի ու դիատոմիտների, պեոլիտների ու բենթոնիտների, բնական շինանյութերի, հրակայուն ու թթվակայուն հումքի, քաղցրահամ ու բուժիչ ջրերի մեծ պաշարներ, որոնք ամբողջությամբ վերցրած լուրջ ավանդ են հանդիսանում մեր Մեծ Հայրենիքի բնական հարստությունների գանձարանում և հաջողությամբ իրացվում են ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում:

Հետաքրքրական է հետամուտ լինել մեր հանրապետության ընդերքում թաքնված հանքապաշարների հայտնաբերման և արդյունահանման պատմությանը:

Հնագիտական և ռադիոժամանակագրական տվյալներն ապացույցներ են տվել այն մասին, որ Հայկական լեռնաշխարհում պղինձն արդյունահանել են սրանից մոտ 8000 տարի առաջ, ոսկին՝ 4500 տարի առաջ, երկաթը՝ 3200 տարի առաջ, կապարը՝ 2500 տարի առաջ: Մեր հանրապետության տարածքը լի է հնագույն ժամանակներին պատկանող ավերված հանքաբուլերով, մետաղաձուլարաններով ու մետաղաձուլական խարամների կուտակումներով: Ընդերքի մետաղական հարստությունները լայն մասշտաբով շահագործվել են հազարամյակների ընթացքում և հիմքից զուրկ չէ դիտանականների զգալի մասի կարծիքն այն մասին, որ մեր մոլորակի վրա մետալուրգիայի առաջին նշանավոր օրրաններից մեկը եղել է Կովկասի և Առաջավոր Ասիայի միջև ընկած դոտին և մասնավորապես Լեռնահայաստանը:

Նորագույն ժամանակներում, Սովետական կարգեր հաստատելու առաջին շրջանում մեզ մոտ շահագործվում էին ֆրանսիական ձեռնակատերից ժառանգած Ալավերդու շրջանի պղնձի հանքերը և ապա Ղափանի հանքավայրը, որոնք միասին վերցրած տարեկան տալիս էին ընդամենը մի քանի հազար տոննա մետաղ: Քաղաքացիական շինարարության պահանջ-

ները բավարարելու համար սահմանափակ քանակությամբ արդյունահանվում էր նաև կրաքար, մարմար, տուֆ, ավազ, կավ: Երկրի նորաստեղծ պետական երկրաբանական կազմակերպությունները և գիտահետազոտական հաստատությունները, ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարային պլաններից ելնելով, Սովետական Հայաստանում ծավալեցին երկրաբանական քարտեզագրական աշխատանքներ, վերստին գնահատեցին անցյալից հայտնի հանքանյութերի հեռանկարները և այսպիսով ստեղծեցին օգտակար հանածոների որոնումների համար անհրաժեշտ առաջին գիտականորեն հիմնավորված ուրվանկարը:

Պետք է նշել, որ միջպատերազմյան շրջանում վերահիշյալ հարցերի լուծման գործում իրենց ավանդը ներդրին այնպիսի երախտավոր ուսգիտնականներ ու ինժեներներ, որպիսիք են պրոֆեսորներ Վ. Գրուշեվոյը, Վ. Կոտլյարը, Ա. Կրժեչկովսկին, Ա. Դոդինը, Ի. Բարկանովը, Մ. Ռուսակովը, Վ. Կրեյտերը, Պ. Լեբեդևը, Բ. Լիշկովը, Վ. Ռենգարտենը, Կ. Պաֆենգոլցը, Վ. Զախարովը, Ն. Բատուրինը, Ա. Սոլովկինը, Յու. Արապովը, Ա. Գինգբուրգը, Ա. Դեմյոխինը, մեծանուն ակադեմիկոսներ Ֆ. Յու. Լեինսոն-Լեսինգը, Ա. Ն. Զավարիցկին, Ա. Գ. Բետեխտինը: Այս նույն ժամանակաշրջանում նրանց հետ սերտ համագործակցում էին անվանի հայ երկրաբաններ՝ պրոֆեսորներ Հ. Կարապետյանը, Տ. Զրբաշյանը, Ե. Բագրատունին, Ս. Այվազովը, Պ. Ղամբարյանը, Հ. Ստեփանյանը, երիտասարդ ինժեներ-հետախույզներ Գ. Հարությունյանը, Ս. Մկրտչյանը, Հ. Տեր-Օզանեզովը, Գ. Փիլոյանը, Ս. Տիգրանյանը, Պ. Մարինոսյանը, Հ. Դալլաքյանը, Մ. Միրզոյանը և ուրիշները:

Միջպատերազմյան շրջանի հետազոտությունների շնորհիվ զգալի ընդարձակվեցին պղնձի հանքավայրերի հետախույզված պաշարները և այդպիսով մեր երկրաբանները, լեռնագործներն ու մետալուրգները իրենց լուծման մոտեցին Մեծ հայրենականի ռազմաճակատը զինամթերքներով ապավելու գործում: Այս շրջանի գլխավոր նվաճումը սակայն համարվում է Հայաստանի նշանավոր պղինձ-մոլիբդենային հանքային ֆորմացիայի բացահայտումը: Այս հանքավայրերի մանրամասն հետախույզումը սկսվեց Հայրենական պատերազմի ժամանակ: Հետազոտում (1955—1965 թթ.) լեռնային փորվածքների ու հորատանցքերի խիտ ցանցով հաջողվեց բազմապատկել պղնձի և մոլիբդենի հետախույզված պաշարները, որոնց հիման վրա կառուցվեցին Քաջարանի (1952 թ.), Ագարակի (1963 թ.) ու Դաստակերտի (1951 թ.) կոմբինատները: Այժմ Հայաստանում ստացվող պղինձ-մոլիբդենային հարստանյութերը զգալի տեղ են գրավում երկրի գունավոր մետալուրգիայի արտադրանքի մեջ:

Երկրաբանական և լեռնահետախույզական աշխատանքները լայն թափ ուտացան մեզ մոտ հատկապես 50-ական թվականներից սկսած, երբ պետությունը Հայրենական պատերազմից հետո կրկին հնարավորություն ստացավ այդ ասպարեզին հատկացնելու խոշոր դրամական և նյութատեխնիկական միջոցներ:

Այս շրջանում (1945—1965 թթ.) հանրապետության անկյունագծային զոտում բացահայտվեց ոսկեբեր հանքանյութերի մի ուրույն և մեծ հեռանկարներով օժտված ֆորմացիա, որի հիման վրա ստեղծվեց և վերջերս շահագործման հանձնվեց Զոդի ոսկեհան կոմբինատը: Մենք երախ-

տագիտության խոսք պետք է ուղղենք նախկին «Կավզուլոտորազվեդկա» տրեստի այն արշավախմբի մարդկանց, որոնք առաջին հետախուզական փորվածքներն անցած Զոդի հանքավայրում և հիմք դրեցին հանքավայրի հետախուզմանը:

Բացահայտվեց երկաթի արդյունաբերական հանքավայրերի մի ամբողջ շարք, որոնց մասին անցյալում գոյություն ունեին միայն կցկտուր տեղեկություններ: Այժմ մանրամասն կերպով ուսումնասիրված և հետախուզված են Հրազդանի (1948, 1958—1962 թթ.) և Աբովյանի (1947, 1960—1975 թթ.) երկաթի հանքավայրերը, ուսումնասիրվում են Մեղրու և Գուգարքի շրջանի երկաթի հանքավայրերը, նախնական բնույթի հետախուզական աշխատանքներ են կատարված Սվարանցի մեծ պաշարներով օժտված օլիվին-մագնետիտային հանքավայրի սահմաններում: Հրազդանի իր տեսակի մեջ եզակի քիմիական կազմություն ունեցող հանքաքարի և բնական գազի հիմքի վրա 10-րդ հնգամյակում կգործի սև մետալուրգիայի առաջին հայկական ձեռնարկությունը, որն արտադրելու է հատուկ նշանակություն ունեցող բարձրորակ պողպատներ և էլեկտրատեխնիկական համաձուլվածքներ:

Աբովյանի հանքավայրում երկաթի հետ միասին մեծ արժեք է ներկայացնում ապատիտը՝ որպես հումք ֆոսֆորային պարարտանյութերի արտադրության համար, իսկ Սվարանցի հանքավայրում օլիվինը՝ որպես հումք մագնեզիումի օքսիդներ և ազոտային պարարտանյութեր ստանալու համար (ազոտաթթվային տեխնոլոգիայի կիրառման դեպքում):

Այստեղ անհրաժեշտ է հիշատակել նաև Մեղրու շրջանի Լիճքի և Արծվաբերդի պղնձի հանքավայրերը, որոնք հետախուզվել են 1950—1965 թվականներին: Այս հանքավայրերը դիտվում են որպես լրացուցիչ աղբյուր Ազարակի կոմբինատի հետագա գործունեությունն ապահովելու համար:

Վերջին երկու-երեք հնգամյակների մեծ նվաճումներից է պեռլիտների, բենթոնիտների և դիատոմիտների արդյունաբերական պաշարների հայտնաբերումը և որակավորումը որպես ինքնուրույն, որոշակիորեն անհատականացած ռեզիոնալ ֆորմացիաների: Պետք է ընդգծել, որ իրենց եկամտաբերությամբ այս հանածոների հանքավայրերը չեն զիջում մոլիբդենի, անագի, վոլֆրամի, ոսկու փառաբանված հանքավայրերին: Հայաստանի պեռլիտների կուտակումներն իրենց որակով լավագույնն են աշխարհում, իսկ պաշարներով շունեն մրցակիցներ: Նույնը կարելի է ասել նաև բենթոնիտների հանքավայրերի մասին, որոնցից ամենամեծը և բարձրորակը գտնվում է Իջևանի շրջանում: Պեռլիտների և բենթոնիտների հումքի բաղադրյալ վրա այժմ դործում են համապատասխանաբար Արագածի և Իջևանի կոմբինատները: Լրիվ նախագծային մասշտաբներով շահագործվելու դեպքում սրանք տարեկան կտան մոտ 30 մլն. ռուբլու եկամուտ: Հայաստանում դիատոմիտների արդյունաբերական իրացման գործում ներկայումս կատարվում են միայն առաջին քայլերը. դրանք ավանդաբար դիտվել են միայն որպես հղկող և ֆիլտրող նյութեր, սակայն վերջերս դիատոմիտներից ստացվել են շափազանց արժեքավոր, ժամանակակից տեխնիկային անհրաժեշտ նոր նյութեր, որոնք զգալի բարձրացում են այդ, առանց այն էլ հազվագյուտ, հումքի նշանակությունը: Բենթոնիտների խոշոր պաշարներ են հայտնաբերվել նաև Նոյեմբերյանի շրջանում,

որտեղ երկրաբանական վարչության ջանքերով հայտնաբերվել և հետախուզվել են նաև ցեոլիտների զգալի պաշարներ: Բենթոնիտների և ցեոլիտների առկա պաշարների հիմքի վրա կարելի է կառավարել բազմազան սորբենտների արտադրություն (այժմ աշխարհում օգտագործվում են ավելի քան 840 տարբեր սորբենտներ):

Անհրաժեշտ է նշել, որ վերը թվարկված հանքավայրի պաշարները որոշիչ դեր խաղացին Աղստև—Իջևան, Սևան—Զոդ և Մինջևան—Ղափան հրկաթգծերը կառուցելու գործում: Մանրամասն հետախուզական աշխատանքներ են կատարվել նաև Թումանյանի և Շորժայի հրակայուն հումքի հանքավայրերում: Առաջինի բազայի վրա գործում է Թումանյանի հրակայուն աղյուսների գործարանը: Ավելի բարձր կայունությամբ են (մինչև 1760°C) օժտված Շորժայի հումքից ստացվող աղյուսները. Շորժայի հումքը պիտանի է նաև մետալուրգիական արդյունաբերության համար որպես կաղապարող նյութ: Այս հանքանյութի խոշոր պաշարները և բարձր որակը հիմք են ծառայում մոտ ապագայում նրա մանրամասն տնտեսագիտական ուսումնասիրման համար:

Հայաստանի տարածքի ոչմետաղական հանածոների ցանկում բացառիկ տեղ է գրավում քարաղը, որի պաշարները հիրավի առասպելական են՝ 300 մլրդ. տոննա: Քարաղի հիմքի վրա գործում են Ավանի աղահանքը և Կիրովի գործարանի աղալուծույթ արտադրող հորատման կայանը: Նշենք, որ աղի վիթխարի պաշարները հայտնաբերվել են Արարատյան դաշտում՝ նավթի ուրոնման նսլափակով կատարված աշխատանքների ընթացքում: Խոր հորատման աշխատանքների հետևանքով պարզվեց, որ Հանրապետության տարածքի մեծ մասում բացակայում են նավթի ու գազի արդյունաբերական կուտակումների համար անհրաժեշտ երկրաբանական նախադրյալները (մասնավորապես մասշտաբային բնույթի), սակայն աղի պաշարներից բացի, այդ աշխատանքները մեզ տվեցին հսկայական ինֆորմացիա հանրապետության ընդերքի վառուցվածքի, հանքաբերության, ստորերկրյա ջրերի և սեյսմոգեն օջախների մասին:

Հայաստանի տարածքում անցյալում բորբոքված հրաբխային արտավիժումներից առաջացել են մեծ հռչակ վայելող տուֆեր, պեմզաներ, լիթոպեմզաներ, օբսիդիաններ, լավաներ ու խարամներ: Առկա են նաև գրանիտոիդներ, գաբրոներ, մարմարների, դոլոմիտների, կրաքարերի ու միշարք այլ արժեքավոր շինանյութերի արդյունաբերական պաշարներ: Այս հանածոների մասսայական արդյունահանման հնարավորությունների մասին կան ընդարձակ լեռնա-երկրաբանական ու տեխնիկա-տնտեսագիտական հետազոտություններ: Այժմ, երբ խնդիր է դրվում հանրապետության դյուղական շրջաններում արդյունաբերական ձեռնարկություններ ստեղծելու մասին, վերը թվարկված շինանյութերի պաշարների լայն չափերով իրացման հարցը դառնում է միանգամայն արդիական: Զերմոցային տնտեսությունների լայն զարգացման կապակցությամբ դրվում է նաև հանրապետության տարածքում հայտնի քարածխի և տորֆի փոքր կուտակումների և տաք հանքային ջրերի օգտագործման հարցը:

Խոսելով հանրապետության ընդերքի հարստությունների մասին, չի կարելի կանգ չառնել ստորերկրյա ջրերի վրա: Մեր երկրաբաններին հաջողվել է հայտնաբերված ջրերը ստորաբաժանել կիրառական ու գենետի-

կական տիպերի, ինչպես նաև գնահատել նրանց հոսքը, պաշարները, որոշել առաջին մոտավորությամբ աղբյուրների կապտածի ու օգտագործման ռեզիները: Կուրորտային շինարարության կապակցությամբ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հանքային ջրերի ուսումնասիրությանը: Մանրամասն հետախուզվել են Արարատի, Շիրակի, Փամբակի, Սիսիանի, Մարտունու արտեզյան ավազանները, Հայաստանի կենտրոնական հրաբխային բարձրավանդակի և ապա ենթալավային տիպի մի շարք հոսքեր, Զերմուկի, Հանքավանի, Բջնու, Դիլիջանի, Ֆիոլետովոյի, Կիրովականի, Մարտունու, Կամոյի, Արարատի, Վեդու, Արգնու, Իջևանի հանքային ջրերը: Պարզվել է, որ հանրապետության ընդերքում ստորերկրյա ջրերի հոսքը կազմում է մեկ վայրկյանում մոտ 138 խոր. մ, որից 1 խոր. մ բաժին է ընկնում հանքային ջրերին:

Վերը թվարկված հետախուզական աշխատանքներում անգնահատելի ավանդ ունի հանրապետության երկրաբանական վարչության բազմահազար կուլեկտիվը, որի ջանքերով հետախուզվել են հանրապետության մոլիբդենի, ոսկու, երկաթի, ալյումինի հումքի, ապատիտի, պեոլիտի, բենթոնիտի, ցեոլիտի, դիատոմիտի, դոլոմիտի, հրակայուն հումքի, քարաղի, հանքային, արտեզյան ու միջլավային ջրերի առաջին արդյունաբերական պաշարները:

Պղնձի, մոլիբդենի և ոսկու հանքավայրերի հետախուզման ասպարեզում զգալի ծառայություն ունեն Գունավոր մետալուրգիայի վարչության երկրաբանները: Անտարակույս զգալի աշխատանք են կատարել նաև մեր նախագծային ինստիտուտների երկրաբանական բաժինները, որոնք մասնակցել են լեռնային արդյունաբերության, հիդրոտեխնիկական, բնակարանային շինարարության, գյուղատնտեսության ու տեխնիկական մեխանիզացիայի, կապի, ստորերկրյա տնտեսության, էներգետիկայի և այլ օբյեկտների երկրաբանական ու տեխնիկա-տնտեսական հիմնավորման շատ պատասխանատու գործին:

Կարևոր երկրաբանական աշխատանքներ են կատարված Արփա—Սևան, Սևան—Դիլիջան, Կիրովական—Ստեփանավան, Քաջարան—Ղափան գծերով անցնող թունելների շինարարության և գազամուղների ու ջրմուղների, ինչպես նաև Երևանի մետրոպոլիտենի շինարարության ընթացքում:

Վերը նշված աշխատանքներում խոշոր դեր են խաղացել երկրաբանական, գեոֆիզիկական և գեոքեմիական հետազոտությունները, որոնք կատարվել են ակադեմիական և ճյուղային ինստիտուտներում, բարձրագույն դպրոցների կողմից և արտադրական կազմակերպությունների թեմատիկ խմբերի և առանձին մասնագետների ուժերով: Բազմակողմանի ուսումնասիրվել և քարտեզագրվել են Հայաստանի ռեգիոնալ կոմպլեքսի ֆորմացիաները՝ նրանց նյութական կազմը, ֆիզիկական հատկությունները, տեղադրման ձևերն ու պայմանները, հասակային ու գենետիկական հարաբերությունները, հանքաբերությունն ու ջրաբերությունը, գետտեխնիկական առանձնահատկությունները: Խոր հորատման, լեռնային փորվածքների, գեոֆիզիկական զոնդաժի և երկնային հանույթների տված հարուստ ինֆորմացիայի հետ միասին նշված հետազոտությունները հնարավորություն տվեցին ծանրակշիռ գիտահետազոտական սկզբունքներով հանրապետության տարածքում առանձնացնել տեկտոնական և մետաղածնական գոտի-

ներ, հանքային շրջաններ ու դաշտեր, արտեզյան ու լավային ջրավազաններ, հրաբխային ու սեյսմոգեն գոտիներ, բացահայտել երկրաբանական մի շարք երևույթների դրսևորման օրինաչափություններ, ստեղծել համապատասխան գեոդինամիկական ու գեոքիմիական մոդելներ ու տեսություններ:

Հանրապետության գիտահետազոտական օջախներում (Երկրաբանական գիտությունների ինստիտուտ, Երևանի պետական համալսարան, Երևանի Կ. Մարքսի անվան պոլետեխնիկական ինստիտուտ) մշակվել են Հայկական ՍՍՀ-ում տարածված նստվածքային ապարների բիոստրատիգրաֆիան, հրային ապարների մետաղածնական ու երկրաքիմիական մասնագիտացման տեսությունը, հանքային ֆորմացիաների և հանքային ջրերի դասակարգումը, նորագույն հրաբխականության հարցերը, օֆիոլիտների պրոբլեմը, տեկտոնաֆիզիկայի և ռեգիոնալ տեկտոնիկայի հարցերը և ուրիշ:

Իր գոյության ավելի քան չորս տասնամյակների ընթացքում Երկրաբանական գիտությունների ինստիտուտը մեծածավալ գիտական հետազոտություններ է կատարել նվիրված հանրապետության բնատարածքի ռեգիոնալ երկրաբանության, շերտագրության, պետրոգրաֆիայի, հանքաբանության, մետաղածնության, հրաբխականության, հիդրոերկրաբանության հարցերին: Այդ ժամանակաշրջանում հրատարկվել են երկրաբանական գիտությունների ակտուալ պրոբլեմներին նվիրված մի քանի տասնյակ խոշոր մենագրություններ, այդ թվում, «Հայկական ՍՍՀ երկրաբանությունը» տաս հատորանոց կոլեկտիվ աշխատությունը, որտեղ լրնդհանրացված են հանրապետության և հարակից շրջանների տարածքում կատարված ավելի քան կեսդարյա երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքները: Ըստ էության դրանց հիմքի վրա են մշակվել հանրապետության ընդերքում թաքնված օգտակար հանածոների որոնման տեսական հիմունքները:

Կարևոր աշխատանքներ են կատարվել նաև լեռնային հումքի օգտագործման տնտեսագիտական պրոբլեմների ուսումնասիրության ուղղությամբ (ՀՍՍՀ-ի Մինիստրների սովետի Երկրաբանական վարչություն, ՍՍՀՄ Գունավոր մետալուրգիայի մինիստրության Երևանի լեռնա-մետալուրգիական և նախագծային ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտ, ՍՍՀՄ Երկրաբանության մինիստրության Լեռնային հումքի էկոնոմիկայի համամիութենական ինստիտուտի Կովկասյան լաբորատորիա, Լեռնային հումքի Կովկասյան ինստիտուտ, լեռնային հումքի Կազանի ինստիտուտի հայկական մասնաճյուղ, Հայկական ՍՍՀ շինանյութերի արտադրության մինիստրություն, «Արմդոլոտո» միավորում և ուրիշ.): Մենք երախտագիտությամբ պետք է հիշատակենք այն աշխատանքները, որոնք մեր հանրապետության տարածքում կատարել են ՍՍՀՄ Երկրաբանության, նավթի և գազի արդյունաբերության, գունավոր մետալուրգիայի, ջրային տնտեսության մինիստրությունները, Գեոդեզիայի ու քարտեզագրության գլխավոր վարչության բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտները և մասնագիտացված հետախուզական կազմակերպությունները:

Եվ տեսության, և պրակտիկայի համար կարևորագույն արժեք են ներկայացնում հանրապետության տարածքում ստրուկտուրային, ֆացիալ և մետաղածնական զոնաների, տեկտոնական հարկերի, խորքային խզման զոնաների ու տարբեր հասակի մագմատիկական ու հանքային ֆորմացիաների

առանձնացումը, օգտակար հանածոների հանքավայրերի բաշխման տարածական ու ժամանակային օրինաչափությունների բացահայտումը, երկրաշարժերի օջախների, հրաբուխների ու հանքային աղբյուրների երկրակեղևի խզման գծերի հետ ունեցած կապի բացահայտումը: Այս ընդհանրացումը կարևոր նշանակություն ունի ստորերկրյա ջերմության գործնական արժեք ներկայացնող աղբյուրների որոնման և երկրաշարժերի կանխատեսման համար:

ՍՄԿԿ 25-րդ համագումարի դիրեկտիվները, ՀԿԿ 26-րդ համագումարի որոշումները և ՍՄԿԿ Կենտկոմի և Սովետական կառավարության 1975 թ. որոշումը Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման մասին նոր լուրջ խնդիրներ են դրել մեր հանրապետության երկրաբանների առջև: Մենք պետք է առաջին հերթին մեծ հավելումով ապահովենք լեռնային, լեռնա-քիմիական և լեռնա-մետալուրգիական արդյունաբերության ձեռնարկությունները բարձրորակ հումքի հետախուզված պաշարներով, բարձրացնենք հետախուզական աշխատանքների արդյունավետությունն ու արտադրողականությունը, բարելավենք հետախուզական աշխատանքների գիտատեխնիկական հիմնավորումը, գիտականորեն հիմնավորենք Հանրապետության կարևորագույն հանքային շրջաններում 1500—ից մինչև 2500 մ խորության մի շարք հենակետային հորատանցքերի հորատումը խոր հորիզոնների երկրաբանական կառուցվածքի և հանքաբերության մասին նոր ինֆորմացիա ստանալու նպատակով, կոնկրետացնենք օգտակար հանածոների կանխագուշակման ու հումքի նոր տեսակների որոնման համար մշակվող առաջարկությունները: Այնուհետև կատարելագործենք մեծ մասշտաբի մասնագիտացված երկրաբանական քարտեզները, բարձրացնենք դրանց տեղեկատվությունը, զարկ տանք երկրաբանական հետախուզական, գեոֆիզիկական ու գեոքիմիական մեթոդներին, բարելավենք մասնագիտական կադրերի պատրաստման ու որակի բարձրացման գործը, լայն ճանապարհ բացենք հետազոտական ու պլանավորման նոր եղանակների ու նոր տեխնիկական միջոցների ներդրման համար: Այս առումով մեծ անելիքներ ունեն Հանրապետության գիտահետազոտական հիմնարկությունները, բարձրագույն դպրոցները, արտադրական կազմակերպությունների թեմատիկ խումբերն ու լաբորատորիաները: Այն ֆորմուլան, թե գիտությունը արտադրական պրոցեսի տեսական կողմն է, բացառիկ պատկերավորությամբ դրսևավորվում է երկրաբանական գիտության և լեռնա-հետախուզական արտադրության կապի մեջ: Գիտության աշխատողները հսկայական անելիքներ ունեն Երկրի կեղևի կառուցվածքի, Երկրի ֆիզիկական դաշտերի, ներծին երկրաբանական պրոցեսների տեսության, հանքանյութի գոյացման տեսության, որոնման ու հետախուզության գիտա-տեսական ու մեթոդական հիմունքների մշակման, երկրաբանական գիտության ֆորմալիզացիայի, տեխնիկական նոր միջոցների ու հետազոտական նոր եղանակների ներդրման ասպարեզում: Այժմ 10-րդ հնգամյակի ժողովրդա-տնտեսական պլաններին համապատասխան Հանրապետության տարածքում ծավալված են քարտեզադրման, որոնման և հետախուզման կարևոր ու հետաքրքիր աշխատանքներ: Սրանց մի մասը շարունակվում է, այսպես կոչված, անավարտ ժբյեկտների տիրույթներում, իսկ մյուս մասը ձեռնարկվում է առաջին ան-

դամ: Այս աշխատանքներին զուգընթաց գիտահետազոտական հիմնարկությունները և բուհերը լեռնահետախուզական կազմակերպությունների մասնագետների հետ միասին պետք է կազմեն Հանրապետության տարածքի մի շարք քարտեզներ՝ լեռնային ապարների ֆորմացիաների, մետաղաբերության, բյուրեղային հիմքի, խզման զոնաների, սողանքների, առանձին հանքային դաշտերի ու ստորերկրյա ջրավազանների, ինչպես նաև մշակեն ապարների բացարձակ հասակի սանդղակ, տիեզերական նկարահանումների երկրաբանական վերծանման մեթոդիկան, ուսումնասիրեն մեզ մոտ շատ լայն տարածված մագմատիկ ապարների ֆորմացիաները, նստվածքային շերտախմբերը, հումքի հնարավոր նոր տեսակները և այլն: Այս առաջարկությունները հիմք կծառայեն հետախուզական ու որոնման աշխատանքները գիտականորեն հիմնավորելու, ինչպես նաև առաջընթաց քայլ կհանդիսանան մեր Հանրապետության տարածքի երկրակեղևի ուսումնասիրման խնդիրները բարձր հիմքերի վրա դնելու գործում:

А. Т. АСЛАНЯН

ГЕОЛОГИЯ АРМЕНИИ К 60-летию ВЕЛИКОГО ОКТЯБРЯ

Р е з ю м е

Геологическая наука и геологоразведочное производство в Армении, по существу, были созданы после установления Советской власти. В геологических организациях республики разработаны и решены важнейшие вопросы стратиграфии, петрографии и литологии, тектоники, металлогении, сейсмологии и вулканологии, инженерной геологии и гидрогеологии, закономерностей распределения месторождений полезных ископаемых и др. На основе этих работ созданы различные специализированные геологические карты, разработаны теоретические основы поисков полезных ископаемых, выявлены определенные металлогенические пояса и рудные формации, произведено районирование области по составу геологических формаций и связанных с ними полезных ископаемых, намечены направления поисково-разведочных работ по всем важнейшим видам минерального сырья. На территории республики выявлены промышленные запасы различных цветных, редких, благородных и черных металлов, горно-химического, огнеупорного и кислотоупорного сырья, перлитов, бентонитов, диатомитов, пемз, шлаков, разнообразных каменных строительных материалов, изучены и выявлены значительные запасы целебных минеральных вод, разведаны бассейны пресных артезианских, субартезианских и безнапорных вод и т. д. Таким образом, создана надежная база для развития отраслей народного хозяйства, основанных на использовании минерального сырья на длительные сроки. Задача дальнейших исследований в области геологии и минеральных ресурсов республики заключается в детальном изучении на новом высоком уровне вещественного состава всех

формаций пород и руд по их генетическим и возрастным типам и структуре, составлении на этой основе специализированных карт, отражающих закономерности распределения этих формаций, количественное прогнозирование полезных ископаемых, создание экспериментальных и математических моделей для изучения отдельных геологических структур и их рудоносности, широкое использование материалов аэро-высотных съемок и геофизического зондирования для изучения строения и состава глубоких горизонтов земной коры и прогнозирования на этой основе предвестников землетрясений, очагов возможных вулканических извержений, промышленных источников подземного тепла, а также корреляция особенностей минерализации верхних слоев коры и глубоких слоев коры и мантии.